




2. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

21. ՄԱՐԴ ՄԸ ՈՐ ԿՓՐԿԵ ԻՐ ԴԱՐԸ

Մեծ անուններ շնորհակցին մեզի Պոլսո հայ գաղութին առաջին չորս դարերը, բայց այս քանի մի անունները, որոնք մեզ կմնան այդ չորս դարերին, կրնան պճնել իրենց շրջանը բացառիկ փառքով:

Տազնապի դարն ալ ունեցավ իր մխիթարանքը. հայ ժողովուրդը շնորհուց, որ Պոլիս ամոթով դադաղ դնե զայն:

Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան, որ այդ դարուն ապրեցավ, կրնա սերունդի մը տեղը բռնել, և զուր չէ բացառիկ մեծարանքը, որ իր հիշատակին կընծայվի երեք դարե ի վեր, ամեն կողմն անխտիր:

Երեմիա Չելեբի, շառավիղ Ակնեն գաղթած հին գերդաստանի մը, ծնած էր 1637 մայիս 13-ին Պոլսո մեջ, և անդրանիկ զավակն էր Մարտիրոս քահանա Քյոմյուրճյանի: Ուսման ծարավը համակած էր զինք առաջին օրեն և փոքր տարիքին հմտացած էր ան շատ մը լեզուներու: Պաշտպանութեանը տակ իր Ամբակում մորեղբորը, որ օրվան երևելիներեն էր, բազմաթիվ ճամբորդութիւններ կատարած էր Երեմիա իր տղայութեան, և երբ Ամբակում կվախճաներ 1655-ին, զայն կորդեզիներ յայ անգամ ժամանակին ամենեն ակա-

նավոր հայը՝ Աբրո Չելեբին: Երեմիա ոչ միայն պաշտպանյալն էր անոր, այլև խորհրդատուն, և իր թելադրութեամբ է, որ Աբրոն հաճախ պիտի աջակցեր հանրագումար գործերու և կարիքներու, պետութեան մոտ իր վայելած դիրքով հայ համայնքը փրկելով նաև բարդ կացութիւններն:

Իր բնածին ձիրքերով, իր ամբարած պաշարով, իր տքնելու ընդունակութեամբ և մանավանդ իր հայու սրտով Երեմիա աչքառու դեմք մը հանդիսացավ շուտով Պոլսո մեջ, վայելելով տակալ բացառիկ հեղինակութեան մը հայուն ու օտարին մոտ:

Երեմիա Չելեբիի կյանքին և գործունեութեան մասին առավելապես իր երկերուն մեջ իր իսկ տված նոթերն գիտենք: Իրմով զբաղողները այնպես կարծեցին պահ մը, թե ան կպատրաստուներ հոգևորական դառնալու և թե պարագաները ետ կեցուցին զայն: Ըիշտ է որ դպրութեան չորս աստիճանները ստացած էր ան, ինչպես շատերը կստանային այն ժամանակ հայ պատանիներն: Բայց ուրիշ որոշ բան մը չենք գիտեր ինչպես իր մանկութեան, նույնպես իր պատանեկութեան մասին:

«Երեմիայի վրա խոսողներուն ամենն ալ լուռ են և բան մը չեն հայտնէր անոր պատանեկական կյանքին,—կգրե Քորգոմյան,— չենք գիտեր, թե ինչ եղած են անոր գլխավոր զբաղումները, մանավանդ այն ազդակները, որոնք յուր թարմ ուղեղը վառեցին և հեռացուցին զինքն եկեղեցական ասպարեզէն, առանց սակայն ատելի ընելու անոր՝

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի Ռ Ռ Ք-ից, ԺՐ-ից, 1963 թվականի Ռ Ռ Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից, Է-Ը-ից, Թ-Ժ-ից, ԺԱ-ից և ԺԲ-ից:

Հայ Եկեղեցին, որուն ամենահզոր ախոյան մը և ամենաշքեղ մը պաշտող մը եղավ մինչև կյանքին վերջը: ... Անոր գրածներն այնպես կհետևեցնեն, թե Երեմիա շատ կանուխն ակնատես եղած ըլլալով ժամանակի եկեղեցականներու պորտաբուծ, զեխ կյանքին, անոնց ամուլ կենցաղին ու ազգակործան վատթար գործերուն, զգլանք զգացած, պաղած է անոնցմէ և չէ ուզած ասպարիզակից գտնվիլ անոնց, բարեբախտաբար»⁴⁷⁵:

«Երեմիա էլ նշանակված էր քահանայության համար և ստացավ սարկավագության աստիճան, — կզբն լեռն իր կարգին, — բայց դրանից հետոն չգնաց, շնայած հոր ջանքերին»⁴⁷⁶:

1659 թվականին, երբ արդեն 22 տարեկան է, զայն կգտնենք իբրև խորհրդական և նոտար Մարտիրոս Կաֆայեցի պատրիարքին: Սողոմոնական խորհրդականն ավելի բան մըն էր ան Պոլսո հայոց Պատրիարքարանին մեջ: Ինքն էր, որ պահ մը տեր կանգնեցավ հայ ժողովուրդի արժանապատվության, երբ հայ կյանքը թատր էր այլազան գայթակղությանց, և իր ձեռք ձգած հեղինակությամբ հեռացուց շատ մը դժնդակ տաղանայներ հայ ժողովուրդի գլխին: Հետո, ամբողջ 35 տարի, ան հասավ հայ ժողովուրդի ամեն նեղ օրին: Դիրք շահեցավ պետության մեջ, և իրեն տրվեցավ «չելեբի» տիտղոսը, զոր այն դարուն ոչ միայն մեծատունները կհամարեին, այլ և մտքի և արվեստի մարդիկ: Ան դիրք շահեցավ և օտարներուն մեջ, որոնք նույնպես հաշվի կառնեին իր հեղինակությունը:

Երեմիա Չելեբի աչքերը փակեց 1695-ին, հաղիվ 58 տարեկան, բեղմնավոր կյանք մը ձգելով ետին, բայց այնպիսի պահու մը, երբ հայ ժողովուրդը իր ծառայությանց կարիքը ունեւր որեւէ ժամանակի ավելի: Սակայն պարած իր այդքան կյանքն ալ բավական եղավ հայ ժողովուրդի պատմության մեջ աղվոր էջ մը գրելու, որ ավելի կաղվորնա քանի դարերը անցնին:

Ակինյան, որ խղճամիտ ուսումնասիրություն մը նվիրեց Երեմիայի կյանքին ու գործունեության, սապես կրնորոշե զայն.

«Միակողմանի չէր իր կրթությունը. հմուտ էր եկեղեցական գիտություններու, ներհուն պատմագիտության, ծանոթ բազմաթիվ լեզուներու, հատկապես հայերենի, թուրքերենի և հունարենի, նաև «եվրոպական լեզուներու», հետաքրքիր ներքին և արտաքին, ազգային և միջազգային քաղաքական իրադարձություններու:

⁴⁷⁵ Դակտ. Վ. Քարգամյան, «Երեմիա Չելեբիի Քեօմիլըճեան, Պատմութիւն Ստամպուլոյ», Ա, Վիեննա, 1913, էջ 142—143:

⁴⁷⁶ Լեռ. Շալոյց պատմություն, էջ 367—368:

Բարեհամբույր էր բնավորությամբ, խաղաղասեր, անանձնախնդիր, ընդունակ գրավելու սրտեր, հաշտեցնելու թշնամացած ոգիներ: Դեպի ընտանիք և հարազատներ խանդաղակաթ էր իր սիրտը, և դեպի արտաքին մարդասեր և ազգասեր: Մեղմական բնության հետ ունեւր կորով, հաստատամտություն, աներկյուղություն, երբ մանավանդ հասարակ շահը, ազգին օգուտը վտանգի մեջ էր:

Ուներ իրեն հիմ կրոնն և ազգը, Եկեղեցին և հայությունը: Եկեղեցվո պայծառության անձնազուհէ էր, ազգին շահերուն նախանձախնդիր: Կատեր կուսակցական ոգին, անձնասեր, փառասեր ձգտումներ: Բովանդակ անձով պաշտպան կանգնած էր Ազգային Եկեղեցվուն, ազգային շահերուն. ինչ կընդդիմանար այս կետերուն, հոն կծառանար իր անձը. կորոզեր ազատադեմ, աներկյուղ, անձնազուհէ: Երկու իրար պատառող կողմերու մեջ համոզվել կմատչի, հաշտարար կկանգնի: Թեպետ կընդունի հարվածներ, բայց հանձն կառնե ամեն վիշտ, առանց տեղեն խուսելու: Ճշմարտությունն և ազգին շահը նկատի ունի, անշահախնդիր, անկաշառ, անաշառ:

Կհարգեր Եղիազարը. բայց երբ տեսավ անոր մեջ փառասեր, ազգային միության թշնամին, բարձրացուց յուր ձայնը, և հեռացավ բարեկամեն որպիս թշնամի:

Վայելեց հարգանք. բայց ի սեր ճշմարտության նշավակ եղավ նաև հալածանք»⁴⁷⁷:

Երեմիա Չելեբի մեծ էր նախ մտքի իր բացառիկ պաշարով: Քիչեր այդ դարերուն իր հմտությունն ունեին: Այն մեկն եղավ հազվագյուտ այն աշխարհականներն, որոնք երեկից զարդարած են հայ պատմությունը, վանականի համբերությամբ պաշար հավաքած են և վանականի տքնությանմբ գրքերը դիզած գրքերու վրա, բայց և մաս առած կյանքի հուզումներուն և փոթորիկներուն մեջ:

Օրմանյան, ինք ևս, ակնածանքով կարտասանե Չելեբիի անունը՝ իբրև մտավորականի. «Երեմիա նշանակելի դեմք մըն է մեր ազգային գործիչներու մեջ՝ յուր ինքնատիպ և բազմակողմանի ձիրքերով: Հավասարապես ներհուն եվրոպական լեզուներու, և տեղական հունարենի, և տաճիկ և արաբացի գրականության, փոխադարձաբար մեկին մյուսին թարգմանեց կարևոր գործեր, և շատ ևս ազգայնոց համար՝ հայերենի, և օտարաց համար՝ հայերենի փոխարկեց, հայրենական լեզվին կատարել հմտությամբ: Յուր երկասիրությունները բազմաթիվ են և զարմանալի պեսպիսություն մը կներկայեն, որոնց

⁴⁷⁷ Հ. Ն. Ակինյան, «Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան», Վիեննա, 1933, էջ 59—60:

մեջ Աստվածաշունչի տաճկերենի թարգմանութենեն, մինչև զավեշտ ոճով և ռամկորեն բարբառով ոտանավորներ կգտնվին»⁴⁷⁸:

Երեմիա Չելեբի մեծ եղավ նաև իր հանրային գործունեության մեջ: Եղան պահեր, երբ անգրեթե նախախնամական դեր կատարեց Պոլսո հայ համայնքը այնպիսի ղեկավարում մեջ, որովհետև բոլոր կնճռոտությունները ժամանակ իրեն կհանձնին ամենուրեք աշխարհ, սկսելով այն վայրկյանեն, երբ պաշտոնական դեր մը կհանձնվեր իրեն Պատրիարքարանի մեջ: Այդ պահերեն մեկը Մարտիրոս Կաֆայեցիի պատրիարքության տարին էր, երբ ահավոր ճգնաժամ մը կանցնեիր ազգը:

Երեմիա Չելեբի մահը աղետալի եղավ Պոլսո հայ համայնքին սպառնացող նոր ալեկոծությանց նախօրյակին: Իր հաշտարար ոգին և մանավանդ իր վայելած հեղինակությունը թերևս կարենային առաջը առնել զավանական վեճերու ստեղծած նոր բարդությանց, որոնք պիտի բռնկեին իր մահեն քիչ հետո, զարհուրելի չափերու հասնելու համար հաջորդ դարու առաջին տասնամյակներուն, և Պոլիսը բեմ դարձնելու համար մարդորսներու նոր շահատակությանց, որոնց զոհ պիտի դառնար, ավա՜ղ, Երեմիա Չելեբի իր իսկ հղբայրը՝ Կոմիտաս քահանան: Այնպես որ, շատ ճիշտ կրնա Օրմանյան, երբ կգրե, թե «Բաղմարդուն և բաղմաշխատ Երեմիայի 60 տարեկան վախճանիլը կնկատենք, ոչ միայն տարիքին կողմն վաղահաս, այլև ազգային շահերու կողմն տարածամ, զի անոր մահվանն ետքը, ավելի սաստկացան բուռն և խիստ ձեռնարկներ, զորս կրնար խափանել Երեմիա յուր խոհական խորհուրդներով, եթե տակավին ապրեր: Գուցե և յուր եղբոր Կոմիտաս քահանային վրա ալ կազդեր, զգուշացնելով զայն բուռն ընդդիմություններ, որ անուղղակի կերպով պատճառ եղան աղետաբեր ղեկավարում»⁴⁷⁹:

Մեծ էր նաև հեղինակությունը, զոր Երեմիա Չելեբի կվայելեր օտարներու մոտ, ըլլա պետական շրջանակներու, ըլլա դեսպանատանց մեջ⁴⁸⁰:

Նվազ նշանակալից չէր Երեմիա Չելեբի: Նախանձախնդրությունը՝ կանխելու վեճերը հայոց և ուրիշ տարրերու միջև: Այնպիսի դարու մը, երբ հայոց և հունաց հարաբերությունները հաճախ կձգտեին մասնավորաբար սուր տեղաց չարաբաստիկ վեճերուն երեսն, Երեմիա Չելեբի նման դեմքերու կարոտ էր ազգը, որպեսզի բարդությունց առաջը առնե⁴⁸¹:

Պոլիս Երեմիային կպարտի նաև տպարան մը հիմնելու փորձը: 1677-ին հիմնված այդ տպարանին կյանքը կարճատև եղավ: Ան փակվեցավ հաղիվ երկու գիրք տպելի հետո: Բայց ան կվկայե այն բացառիկ նախանձախնդրության մասին, որով համակված էր Երեմիա՝ Պոլիսը օժտելու համար հայ տպարանով մը, որ առաջինը պիտի ըլլար այն անդրանիկ փորձեն հետո, որուն ձեռնարկեր էր Աբգար Դպիր ավելի քան դար մը առաջ, 1567-ին, կարճ ժամանակ մը տևելու համար լուկ, այսինքն հաղիվ տարի մը⁴⁸²:

Երեմիա Չելեբի մեծ էր մանավանդ իր հայու սրտով: Ան իսկական հայրենասեր մըն էր, այս բառին ամենն խոր իմաստով: Անոր ջերմ սերը դեպի իր ժողովուրդը ի հայտ կուգա բոլոր այն մարդերուն վրա, ուր ան գործած է, և բոլոր այն գրողությանց մեջ, որոնք ելած են իր գրչեն:

Պետք է իր ձեռագիրներուն մեջ թափառել, շոշափելու համար տվալտանքը, զոր զգացած է իր հոգին հայ ժողովուրդի մեծ վշտին առջև, և զայրույթը, որով կհամակվի ան, ակնարկելու ժամանակ հայ ժողովուրդի գողգոթային հարեան զույգ լուծերու տակ:

«Տարեգրական պատմություն»-ը, զոր հորինած է ան, պատկերն է անդհանքին, որ իր հոգին կխռովե հայ ժողովուրդի մարտիրոսագրության ի տես: Այդ երկը անտիպ կմնացարդ, Զարհանայան զայն տեսած է վենետիկի իր քավարանին մեջ»⁴⁸³:

Հիմնվելով ցարդ անժանոթ մնացած ձեռագրի մը ինչ-ինչ էջերուն վրա, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան մեջ կբերե հատված մը, ուր Երեմիա Չելեբի իր բովանդակ ցասումը կպոռթկա թուրք սովթաններու բռնապետության անագորուն լուծին դեմ⁴⁸⁴:

Երեմիա Չելեբի փրկություն կհուսար եվրոպական պետություններեն, ինչպես կերևի ներքոդի մը մեջ, զոր էջմիածնի խորհրդածողովեն քիչ հետո, 1679-ին, ուղղեց Լեհաստանի թագավոր Յան Սոբեսկինին և ուր զայն կմեծարեր իբրև քրիստոնյա ժողովուրդներու

«Սիրող, խրճամոզ, դաստիարակող,
Հայր և դատաւոր, տէր և թագաւոր...
Ապստամբողաց քչեմմեց յաղթող...
Եղեռնագործից սաստօղ և տանջող,
Դատօղ և սպանող, արդար թագաւոր...
Քաւիչ և ազատիչ, փրկիչ թագաւոր»⁴⁸⁵:

482 Ն. Ա. Ալիևյան, «Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան», էջ 67—68:

483 Չ. Գ. Զարեհանայան, «Պատմություն հայերեն զպրության», Բ, Վենետիկ, 1905, էջ 360—362:

484 Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ...», Բ, էջ 22:

485 Երեմիա Քյոմյուրճյան, «Օրագրություն», Երուսաղեմ, 1939, էջ 526:

478 «Ազգապատում», Բ, էջ 2666:

479 Անդ:

480 Անդ, էջ 2665:

481 Ն. Մ. Զամյան, «Պատմություն Հայոց», Գ, էջ 720:

«Ավելի ուշ, — կրես Ա. Հովհաննիսյան, — Քյոմյուրճյանը գրեց «Ուղերձ համառոտ առ լուսավիճող ժողովրդին թագաւոր Գաղղիոյ, ի պատեհանքիս զհայկալոսեան նորին... ի դեսպանութեան Պ. Փեթրո ժէրարդէնի, որ բնակէր ի Ղալաթիա»: Այդ ուղերձը, ինչպես և 1682 թ. Քյոմյուրճյանի «Պատարանը իւրոյ ժամանակին» քերթվածը անտիպ են ցարդ և մեզ ծանոթ են միայն վերնագրերով»⁴⁸⁶:

Լուսավիճող ժողովրդին ուղարկված այդ նամակին մասին Երուսաղեմի վանքին թիվ 1058 ձեռագրին մեջ (էջ 65ա) հետևյալ տողերը պահպանված են սակայն.

«Ուղերձ առ թագաւորն Յոաննու.

Ի փառս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի վերայ աշտանակի եօթնադանն լուսով բարձրացեալ քրիստոսասէր թագաւորն Լուսավիճող, որ ընկալեալ է զթագաւորութիւն առ ի հովուելոյ զբազմահոյ ժողովուրդս Տեառն:

Ձորս և արժանապէս կարգաւորեալ և դարգարեալ՝ ըստ որում և ինքն հոգեկան մասամբ պաշտոնացեալ, և մեղաց աղտն ի բաց բարձեալ հեռի յինքնէ, և առ տէրունի զշաւեղն որ է ճշմարիտ ճանապարհ և կեանք: Վասն որոյ խնդրեցուք և աղօթս ձիզս տարածեսցուք առ ամենակարող բարձրեալն Քրիստոս, զի զարժանաւոր ծառայն իւր զԴժ-ան Լուսավիճող թագաւորն ի ստուգապէս ճանապարհն և ի կեանս հասցէ յանեղծն և յաւիտեանական փառս օրհնեալ արքայութեան: Եւ զծիրանեծին զպայազատացեալ թագաժառանգ զորդիսն իւր փառք թագաւորականօք պսակեսցէ յազգաց ազգս ամբողջ կենօք ի պարծանս և ի յաղթութիւն ժողովրդեան իւրոյ. ամէն:

Դրեցեալ եղև ի թվին Քրիստոսի 1687 ի փաշաթօրութեան պարոն իշխանի Փեթրո ճերարտինի ի Ղալաթա քաղաքի»⁴⁸⁷:

Ակնհայտ կկարծեն, թե այս ուղերձը Լուսավիճող ժողովրդին մատուցված է Մատթեոս Աբրո Չելեբիի կողմից:

Ակնարկելով Երեմիա Չելեբիի ցույց տված բնադատական վերաբերմունքին հայ հակամարտ հոսանքներու հանդեպ, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյան դիտել կուտա, թե ան այնուամենայնիվ «ի վիճակի չգտնվեց արգասավորելու բնադատական իր հայացքները նոր որևէ ծրագրով, նախագծել հայ ազատագրական շարժման համար նոր մի ճանապարհ, մատնանշելով հայ ժողովրդին նրա երազած Ավետյաց երկրի ապահով ուղին: Առ այժմ Քյոմյուրճյանը ևս ոտք էր դնում խաբուսիկ այն արահետի վրա, որով

իրենից առաջ ապարդյուն քայլել էին բազմաթիվ ուրիշները»⁴⁸⁸:

Տվյալներ մեզ կպակսին ճշտելու համար այն կապը, զոր Երեմիա Չելեբի կրնա ունեցած ըլլալ այն փորձերուն հետ, որոնք եղան իր ապրած դարուն՝ հայ ժողովուրդի ազատագրության համար այս կամ այն լուծեն:

Երեմիա Չելեբին չէր կրնար տեղյակ եղած ըլլալ այն խորհրդակցություններուն, որոնք Մալր Աթոռի մեջ տեղի ունեցեր էին հայ ժողովուրդի տառապանքին ճար գտնելու համար և ճամբա հաներ էին ժերունի կաթողիկոս մը, որպեսզի երթա Եվրոպայի խղճմտանքը բախել: Օրմանյան կկարծեն, թե երբ 1679-ին Պոլիս կուգար Զուլայեցին պատվիրակության մը հետ, պետք է Երեմիայի ևս հաղորդված ըլլան «Շջմիածնի խորհրդակցության մեջ հաստատված գաղտնի տեսությունները, և անկե հարմարագույն խորհրդական մը չէր կրնար գտնել կաթողիկոսը, թե՛ օտարաց հետ հարաբերության մտնելու, թե՛ պետական զգուշավորությունները կարգադրելու և թե՛ ազգային կազմակերպության կետերը ճշտելու համար»⁴⁸⁹:

Ակադ. Ա. Հովհաննիսյան ևս այն կարծիքին է, «որ նշանավոր գրողն իր կյանքի այդ ժամանակամիջոցում դիմուղիում էր դեպի Հակոբ Զուլայեցու բռնած ճանապարհը: Հիւրավի տակավին այդ կաթողիկոսի մահվան առթիվ գրած իր «Ողբ»-ի մեջ, անդոսնելով նրա հակառակորդներին, Քյոմյուրճյանը բևեռում էր ազգի միտքը տեսիլներով սալարկված հին հուսակայանի վրա»⁴⁹⁰:

Իրականին մեջ Երեմիա Հակոբ Զուլայեցիի մահվան առթիվ գանձ մը և չորս տաղեր հորինած է, որոնք պահպանված են Երուսաղեմի վանքին 1042 թիվ ձեռագրին մեջ (էջ 70ա—77բ)⁴⁹¹ և որոնք կպանծացնեն հանգուցյալ կաթողիկոսը իր բազմազան բարեմասնությանց մեջ, հաճախակի ակնարկելով նաև անոր տագնապններուն և պայքարներուն՝ հանուն հայ ժողովուրդի բարօրության:

Հիշյալ գանձին մեջ Երեմիա, հանգուցյալ կաթողիկոսը ողբացած ժամանակ, կողբա և հայ ժողովուրդի դարավոր գերությունը.

«... Ազգին Առշակեան պայծառ քաղցն
բարձան և նուստացան...
Օտար ազգ յարեան ի մեզ բռնացան,
մեք ծառայական.
Աշխարհ մեր առան, զվաստակս մեր
կեռան մեզ ակն յանդիման.

⁴⁸⁸ Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ...», էջ 220—221:

⁴⁸⁹ «Ազգապատում», Բ, էջ 2612:

⁴⁹⁰ Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ...», էջ 222:

⁴⁹¹ Հ. Ն. Ալիեյան, «Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան», էջ 193—218:

⁴⁸⁶ Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ...», էջ 222:

⁴⁸⁷ Հ. Ն. Ալիեյան, «Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան», էջ 149—150:

Բարի աղօթիք սուրբ հայրապետիս,
Տէր, այց արա՛ տառապեալ ազգիս
Աղաչեմք: Լուր Տէր...⁴⁹²:

Առաջին տաղին մեջ ևս նույն ցաստամով
կողկոնչ հայ ժողովուրդի ճակատագիրը.

«Ողբամ գեեզ Հայոց աշխարհ...

Բարձան քազք ի մեր գլխոց

և եղաք ողորմ ու լալի,

Վանեալք, տարագրեալք, ցունեալք՝

ոսից կոխ ազգաց օտարի...

Վարդաճանց պատերազմէն՝

մինչև ցարդ մեր քշուանելի.

Տապաստ անկեալ երկիր մեր՝

ի պարսից, տանկաց, քաքարի...

Սպառ սպառ և ցիր և ցան՝

կոտորեալ, վարեալ և գերի...»⁴⁹³:

Երկրորդ ողբին մեջ կապաղե հայ ժողովուրդի միևնույն դռն ճակատագիրը.

«Արշակունիքն սպանեցան,

և ոչ ունիմք Բագրատունիսն,

ու Ռուբինեանքն պակասեցան,

կենցաղք հայոց աւաղելի.

Տաքեացիք Մովսէս չունեալ,

Փիլիպպոսն մեք վերջացեալ,

Տեառն Յակոբայ հայրապետիս

ի մէջն այսօր արդ Բրաժարեալ,

ի հայրենեաց իւր տարագրեալ

յօտար աշխարհ գայ վտարեալ...»⁴⁹⁴:

Հաջորդող դրը կապտմե ան սուգը, որով Պոլիս գերեզման դրավ իր հայրապետը, իսկ վերջինը գովասանական տաղ մըն է՝ ի պատիվ հանգուցյալ հայրապետին:

Այս բանի մը մեջբերումներն ալ բավ են վկայելու ան ջերմ սիրուն մասին, որով համակված էր Երեմիա Չելեբի դեպի իր ժողովուրդը, և այդ այնպիսի շրջանի մը, երբ հայ կյանքը կիրքով ու փոխադարձ ատելությամբ բռնկած, թունավոր մթնոլորտ մը ստեղծեր էր սուլթաններու մայրաքաղաքին մեջ:

Երեմիա Չելեբի մեծ եղավ նաև և մանավանդ իր բեղմնավորությամբ: Քիչ հեղինակներ, մեր մեջ, կրցած են այնքան արգասաբեր ընել իրենց գրիչը: Դժբախտաբար իր գրական ժառանգությունը դեռ սեփականությունը չէ դարձած հանրության և մեծ մասամբ կղզված կմնա գրադարաններու դարակներուն մեջ:

Երեմիայի երկերին կարևոր մաս մը իրենց մոտ կապահան Վենետիկի Մխիթարյանները: Երեք դարն ի վեր կօգտվին անոնցմե, նյութ կթաղեն շարադրելու համար իրենց երկերը, ինչպես ըրած է Հ. Մ. Չամչյան, երբեմն

⁴⁹² Հ. Ն. Ալիեյան, «Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան», էջ 193—194:

⁴⁹³ Անդ, էջ 203—204:

⁴⁹⁴ Անդ, էջ 203:

փշրանքներ կնետեն անոնցմե հայ բանասերներու, ինչպես ըրած է Հ. Հովհաննես Թորոսյան, բայց չենք գիտեր ինչպե՛ս կզոռչանան զանոնք լրիվ ճանչցնել հայ ժողովուրդին, կամ ճանչցնել փորձելու սկսելի հետո. անմիջապես կանգ կառնեն⁴⁹⁵:

Երեմիա Չելեբիի երկերուն մասին առաջին տեղեկությունը Չամչյանը տվավ, որ, ըսենք ի դեպ, առաջին օգտագործողը եղավ Երեմիայան իրենց մոտ մնացած ձեռագիրները, իր պատմության վերջին հատորը հորինած ժամանակ:

Երեմիա Չելեբիի գրական ժառանգությունն կարևոր մաս մը ի պահ կմնա Երուսաղեմի հայոց վանքին մեջ ևս: Բարեբախտաբար հայ բանասիրությունը ոչ միայն ծանոթ է անոնց լրիվ ցանկին, այլ նաև տպագրված ունեցավ այդ երկերուն ամեննեմ կարևորներն մին, «Օրագրութիւն»-ը⁴⁹⁶, շնորհիվ Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանի, հետագային պատրիարք, որուն այլապես ալ շատ բան պարտական է հայ բանասիրությունը:

Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի մատենադարանն ալ Երեմիայի ձեռագիրներին տասնյակ մը ունի, որոնք հետզհետե կսկսին ծանոթ դառնալ հայ բանասիրության: Ասոնց մեջ ալ թանկագին նյութեր կան անշուշտ հայ ժողովուրդի պատմության համար և հայ բանասիրությունը անհունապես երախտապարտ պիտի մնա ակադ. Աշոտ Հովհաննիսյանին, որ վերջերս կիսոստանար հրապարակավ հանրության սեփականությունը դարձնել Քյոմյուրճյանի ցարդ անծանոթ մնացած բանի մը էջերը, զորս գտած էր մատենադարանի ձեռագիրներն մեկուն մեջ⁴⁹⁷:

Երեմիայի ձեռագիրներն կան նաև Վիեննայի Մխիթարյաններուն մոտ: Ըլլա այդ ձեռագիրներուն, ըլլա ուրիշներուն մեջ պահված Երեմիայի գրություններուն մասին մեզ կլուսաբանե Տաշյան ցուցակը: Բայց առավելապես Հ. Ներսես Ակինյանին կպարտինք ոչ միայն անոնց, այլև Երեմիա Չելեբիին մեզ հասած բոլոր գրությունց ամբողջական մատենախոսությունը՝ կցված մեծ հայուն կենսագրությանը⁴⁹⁸:

Վերջապես, Երեմիայան նյութեր կմնան կամ կմնային զանազան ուրիշ մատենադարաններու (Նոր-Ջուղա, Արմաշ, Ղալաթիա, Բրիտանական թանգարան) և անհատական հա-

⁴⁹⁵ Հ. Միմոն Երեմյան, «Երեմիա Չելեբի», «Բագ-մավեպ», 1903, էջ 367, 473:

⁴⁹⁶ «Օրագրութիւն» Երեմիա Չելեբի Քյոմյուրճյանի. հավելված Ա՝ թուղթեր, Բ՝ ուղերձներ, Գ՝ զանձեր և ողբեր, Երուսաղեմ, 1939:

⁴⁹⁷ Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ...», էջ 221:

⁴⁹⁸ Հ. Ն. Ալիեյան, «Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան, կյանքն ու գրական գործունեությունը», Վիեննա, 1933:

վաթաժներու մեջ: Հայ բանասիրությունը երախտագիտությամբ պիտի հիշե միշտ բժիշկ վահրամ Թորգոմյանը, որ ոչ միայն հրատարակութեան տնօրէն իր մոտ գտնվող Երեմիայի մեկ ձեռագիրը, այլ անոնց կցեց, հաջորդական երեք հատորներու մեջ, իր ժանոթագրութեանն երբ Լա, Թանկագին ատաղձ մը հայ-թայթելով այսպէս Պոլսո պատմութեամբ զբաղողներուն⁴⁹⁹:

Ու հիմա կարծեմ հակիրճ ակնարկ մը նետել Երեմիա Չելեբի Բյումյուրճյանի գրական ժառանգութեան վրա:

Երկերու առաջին շարքի մը մեջ, Երեմիա Չելեբի պատմական Թանկագին նյութեր կուտա ժամանակակից անցքերու վրա, մանավանդ անոնց, որոնք կը հազարգոյն հայ կյանքը:

ա. «Օրագրութիւն», ուր Երեմիա օրը օրին արձանագրած է 1648 հունիս 11-էն մինչև 1663 նոյեմբեր 11՝ տասնհինգ տարւան և վեց ամսական քաղաքական, ազգային, ընտանեկան և մասնավոր դեպքերը, մերթ համառոտ և ամփոփ և մերթ բավական ընդարձակ:

(Ինքնագիր ձեռագիրը՝ Երուսաղեմ, Ս. Հակոբյանց մատենադարան, Թիվ 1893):

Հրատարակած է Մեսրոպ Եպիսկոպոս Նշանյան, «Օրագրութիւն Երեմիա Չելեբի Բյումյուրճյանի», Երուսաղեմ, 1939:

բ. «Տարեգրական պատմութիւն», կրովանդակե Պոլսո և գովառներու մեջ պատահած հրդեհներուն մանրամասն պատմութեանը, ինչպէս և երկրաշարժներու, ողողումներու և համաճարակներու նկարագրութեանը, իր ժամանակի օսմանյան պատերազմները ընդգեմ ավստրիացիներուն և հունգարներուն, Վենետիկի, Պարսից և այլն, քաղաքական հանդեսները, գիսավորներու երևումը, սուլթաններու և վեզիրներու նշանավոր գործերուն հիշատակութեանը, պալատական դավադրութեանները և այլն, Պոլսո և Երուսաղեմի պատրիարքներուն և էջմիածնի նվիրակներուն պայքարները, Աթոռներուն հափշտակութեանը, իրավունքներու բռնաբարութեանները և այլն:

(Ինքնագիր ձեռագիրը՝ Վենետիկի Միսիթարյանց մատենադարանին մեջ, Թիվ 509):

գ. «Պատմական բանէ իւրոյ ժամանակին». 1682 թվականին Երեմիայի կողմէ էջմիածին՝ Նդիազար կաթողիկոսին ղրկված թուղթն է սա, որ «Ուղիմահմ ճեմարանի սրբազան ժողովոյդ ողջունի և այս յայտնեցի» բառերով կսկսի և ուր 20 հատվածներով կնկարագրվին օսմանյան արքունիքին և մայրաքաղաքի կյանքին վերաբերյալ անցքեր, որոնց կարգին նաև «Եօրհուրդ ֆուանցոց ար-

քայի ընդ կայսեր Հոսմայ», «Պատրաստութիւն Տաճկաց մարտի ընդ Մաճարս», «Վասն դեսպանին Մոսկովաց», ինչպէս և հայոց հետ կապված դեպքեր՝ «Վասն անճարակութեան Պետրոս վարդապետին», «Անցք Մաթէոս Չելեպույն», «Ողջոյնք ումանց առ Վեհ Սուրբ» (Չեռագիրը՝ Երուսաղեմ, Ս. Հակոբյանց մատենադարան, Թիվ 1058, Թ. Թ. 44ա—56բ):

դ. «Պատմութիւն նորոց նահատակաց», ուր Երեմիա գրած է 1686-ին, երբ այցի գացած էր Կարբիի կուսանաց վանքը, «առանձինն և ազգային նահատակաց պատմութիւններ, թէ ի Յայսմաւորաց և թէ յայլ գրոց, այլ և ի լրոյ և ի տեսոյ քաղեալ և հաւաքեալ»⁵⁰⁰:

(Չեռագիրը՝ Վենետիկի Միսիթարյան մատենադարան, Թիվ 509):

ե. «Վիպասանութիւն յԱպո Չելեպի», ուր Երեմիա կերպի իր մեկնասին կյանքն ղրկագներ, այս առթիվ նկարագրելով նաև քաղաքական ինչ-ինչ պատահարներ, որոնց հետ կապ ունեցան Արահամ Չելեբին և ազգային զանազան անցքեր: Գրված է 1666—1672 տարիներուն միջև:

(Չեռագիրը Չ. Ն. Ակինյան տեսած է Մյունխեն, 1930-ին, Լուդվիգ Ռոզենթալ գրավաճառին մոտ):

զ. «Աշխարհագրութիւն», «գոր գրեաց,— կրն Չամյան,— ի խնդրոյ դեսպանին Ալամանաց ի վերայ աշխարհաց Պարսից, Հնդկաց և Անատոլիոյ, և ընդարձակ ևս ի վերայ Հայաստանու և ի վերայ թեմից իւրաքանչիւր կաթողիկոսարանաց և վանօրէից զորս և յանդիման արար ի պատկեր աշխարհացուցի»⁵⁰¹, Չամյան կհիշե նաև Սոմալյան⁵⁰², ավելցնելով, որ այն այնքան կարեւոր աշխատութեանն մնացած է այժմ աշխարհագրական քարտեզի հառաջաբանին հատված մը միայն: Ալիշան ևս հիշատակած է զայն⁵⁰³, ավաղելով, որ այս կարեւոր երկը դեռ չէ հայտնված որեւէ տեղ:

է. «Տոմարական գիտելիքներ» խորագրով աշխատութեան մը մեջ Երեմիա աշխատած է խտացնել Հայոց և Փրկչական թվականներու համար դանազան հանելուկներ և բառախաղեր, երկ, ուր հեղինակը մեծ ճիգ վատնած է բռնագոսիկ նախադասութեանց մեջ զանազան թվականներ տալու համար, ինչպէս սովորութեան ունեին ընել իր դարու թուրք հեղինակներն ալ, նախադասութեանց տառերուն թվական արժեքներուն գումարով կազմելով ուղղված տարին: Այսպէս՝ «Ի ճան կակալ ծաղկին» նախադասութեան տառերը կձևացնեն 1634 թվականը, «Զապիկ ճան»՝ 1862, «Զեկոյ ինձ Եղա»՝ 1482 և այլն:

⁵⁰⁰ Չ. Ն. Ակինյան, «Հայագիտութեան», Ա, § 133:

⁵⁰¹ Չ. Մ. Չամյան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 723:

⁵⁰² Սոմալյան, «Quadro», էջ 160:

⁵⁰³ Չ. Ն. Ակինյան, «Հայագիտութեան», Ա, էջ 133:

⁴⁹⁹ Դոկտ. Վ. Չ. Թորգոմյան, «Երեմիա Չելեպիի Բեռնարձեան, Ստամբուլի պատմութիւն», Ա, Վիեննա, 1913, Բ՝ 1932, Գ՝ 1938:

(Ձեռագիր՝ Երուսաղեմ, Ս. Հակոբյանց Մատենադարան, թիվ 1058, թ. թ. 106ա—119բ): Ուրիշ խումբ մը երկասիրութեանց մեջ, Երեմիա առավելապէս Թուրքիոյ պատմութեան հետ կապված նյութեր կը շարունակէ, թեև տեղ-տեղ կարելի է հանդիպիլ հայ կյանքը շահագրգռող նյութերու ալ:

ա. «Պատմութիւն համառոտ չորեքհարիւր տարւոյ օսմանցոց քաղաքացեաց, որ ի սուլթան Օսմանէն մինչև այսմ սուլթան Մուհամետ ԺԺ քաղաքացի են»:

(Ձեռագիր՝ Երեւանի մատենադարան, թիվ 1675, էջ 2ա—174ա):

բ. «Քաղաքութիւն օսմանցոց համառօտի պատմութիւն... արտագրեալ ի մատենագրացն օսմանցոց ումեմն Երեմիա Չէլէպու Քէօմիւրճի օղլույ Կ. Պոլսեցոյ մերձ ի թուականին Հայոց ՌՃԽԴ (1695)»:

(Ձեռագիր՝ Երեւանի մատենադարան, թիվ 1786, Վիեննայի Մխիթարյանց մատենադարան, թիվ 786, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարան, թիվ 1176):

գ. «Ուտի շարադրեալ անուամբ քաղաքաց օսմանցոց»: Հավանաբար այն ոտանավորն է, որուն համար Չամչյան կըսէ, թե Նիկիա-զար շարադրեց «ի խնդրոյ Յակոբայ կաթողիկոսի»⁵⁰⁴:

դ. «Պատմութիւն հրակիզման Կ. Պոլսոյ, որ եղև յամի 1660 ի 14 Յուլիսի, յորում երկարօրէն գրէ զաղէտս և զգիմառնական երգս ողորց յօրինեալ շափով ոտից»:

(Ձեռագիր՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարան, թիվ 892, թ. թ. 172բ—270ա):

ե. «Պատմութիւն Ստամպոլոյ», զոր Երեմիա հորինած է տաղաշափայլ 8 գլուխներու մեջ և ավարտած 1689-ին: Պոլսո թաղերուն մեջ կատարված պոռնիկի մը ձեռքով, Երեմիա կնկարագրէ այդ թաղերը, տեղեկութիւններ տալով նաև ամեն մեկ թաղի հայութեան մասին:

(Ձեռագիր՝ Երեւանի մատենադարան, թիվ 1675, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարան, թիվ 1697, և դուկատ. Վ. Թորգոմյանի մոտ):

Հրատարակած է դուկատ. Վ. Թորգոմյան, «Երեմիա Չէլէպիի Քէօմիւրճեան, Ստամպոլոյ պատմութիւն», Վիեննա, Ա, 1913, էջ 1—122, կցելով ընդարձակ ծանոթագրութիւններ, էջ 125—412, Բ, 1932, էջ 413—860 և Գ, 1933, էջ 1—294):

զ. «Համառոտ ստորագրութիւն Կ. Պոլսոյ նեղուցի», աշխարհիկ ոճով և ոտանավոր:

Կըսվի, թե Երեմիա իտալերեն ևս շարադրած է այս երկը⁵⁰⁵:

Երկերու հաջորդ խումբը հիշատակարաններ են, զորս Երեմիա գրի առած է եկեղեցիներու շինութեան կամ նորոգութեան, կամ ձեռագիր-ներու ընդօրինակութեան առթիւ:

ա. «Կոնդակ Ս. Կարապետ Եկեղեցոյ ի Կրեւէ կղզոյ»: Հիշատակարանն է Ս. Կարապետ եկեղեցւոյ, զոր Արքայապետ Չելեբի 1670 թվականին կառուցել տվաւ Գանտիայի մեջ: Այնտեղ պատմված է կղզիին առումը Քյոփրյուլյու Ահմեդ փաշայի կողմէ 1669 սեպտեմբեր 6-ին, շորեքամյա պաշարումի մը հետո: Կհաջորդեն 33 գովասանական երգեր:

(Ձեռագիր՝ Փարիզ, Հովհաննես Զաւրյանի մոտ):

բ. «Յիշատակարան Աւետարանին Արքահամ Չէլէպոյ», գրված տաղաշափայլ Երեմիայի ձեռքով 1263-ին Գունբերի մեջ ընդօրինակված և 1663-ին Արքայապետ Չելեբիի կողմէ գնված Ավետարանի մը կից, անմահացնելու համար Արքայան գերդաստանի հիշատակը:

(Ձեռագիրը Ղևոնդ վարդապետ Փիրդաւեմյան 1879-ին տեսած է Զմյուռնիա, Մարգար Աստվածատուրյանի մոտ):

գ. «Կոնդակ յիշատակի եռոգման Ս. Գէորգ եկեղեցոյն հայոց ի Փիլիպպոպոլիս» (1677): Նկարագրութիւնն է հիշյալ եկեղեցւոյ նորոգութեան Մատթեոս Չելեբիի օժանդակութեամբ, Կամենիցեն գաղթող հայերու խընդրանքով:

(Կոնդակը տեսած է Հ. Քյուրտյան 1919-ին Կոստանդնուպոլիս, Արշակ Ալպոյաճյանի մոտ):

դ. «Յիշատակարան Մաշտոցի», զոր Երեմիա նվիրած է Նիկոմիդիո մերձակա Ղըշլա գյուղի հայ եկեղեցւոյն, երբ 1661-ին այցելած էր նույն գյուղը իր հոր՝ Մարտիրոս քահանայի հետ:

(Հիշատակարանը կպահպիր Արմաշ, մինչև մեծ սպանդը):

Երեմիա, տասնյակ մը երկերու մեջ, զբաղած է նաև դավանական հարցերով, ոմանք կապված իրենց կյանքին մեջ տեղի ունեցող վեճերու և գայթակղութեանց հետ, ուրիշներ՝ արժարժված ի պաշտպանութիւն Հայ եկեղեցւոյ ուրիշ դավանանքներէ եկած քննադատութեանց դեմ:

ա. «Յաղագս՝ դեռաբխտոսին, որ կէտի կէտի ասի, արարեալ և շարադրեալ Երեմիայի դպրի Կոստանդնուպոլսեցոյ, որ էր ժա-»

⁵⁰⁵ Տեղատ վարդապետ Պալան, «Քյուրակն», 1897, էջ 612:

⁵⁰⁴ Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 723:

մանակակից և տեսող իրացն ի ՌՃԺԵ (1666) թուղը:

(Զեռագիրը՝ Երուսաղեմ, թիվ 605բ, Վենետիկ, ըստ Սոմալյանի, «Quadro», էջ 160, և Ախյոյան Լ. Բայբուրդյանի մոտ. ըստ Ակինյանի, «Երեմիա Զեկերի Քյոմյուրճյան», էջ 121):

Տպագրված Կոստանդնուպոլիս, անթվական և առանց հեղինակի անվան, հետևյալ խորագրով. «Տետրակս այս ու կոչի Սապեթայի Սևու համբարեալ ի Հրէից ոմն խարեբայ Սապեթայ անուն կամէր կրկին մոլորել զմոլորեալուն»:

բ. «Վասն վերստին խայտառակութեան Հրէից, նոյնոյ Երեմիայի է շարագրեալ ոտանաւոր»:

(Զեռագիրը՝ Ախյոյան, Լ. Բայբուրդյանի մոտ. ըստ Ակինյանի, «Երեմիա Զեկերի Քյոմյուրճե տղ զհամոծ իսնմանով ժմսոյ ղ զսոցոմյուրճյան», էջ 123. Երուսաղեմ, թիվ 605բ և 959):

գ. «Վասն էմէֆեի առնաւտ Տիմոյի ումեմն ու սիրեաց զաղչիկ մի հրէի Մրգատայ տոս. և աղչիկն խոստանալ երթալ ընդ նմա ուր և կամիցի մանուկն»:

(Զեռագիրը՝ Ախյոյան, Լ. Բայբուրդյանի մոտ. ըստ Ակինյանի, «Երեմիա Զեկերի Քյոմյուրճյան», էջ 124. Երուսաղեմ, թիվ 605բ և 959. Երևան, թիվ 386):

դ. «Այլ իմն բան հրէի կնոջն Քերային», որ սպսիս կսկսի. «Աստ քեզ բան ծիծաղելոյ սակս Հրէից ունիմ պատմութեան»:

(Զեռագիրը՝ Երևանի մատենադարան, թիվ 1675):

ե. «Վիճաբանութիւն ընդդէմ Հրէից». կհիշեն Չամչյան (Գ, էջ 723) և Սոմալյան («Quadro», էջ 160): Ակինյան կենթադրե, թե մեկն է այն վիճաբանութիւններն, զորս շատեր գրեցին Սաբեթայ Սեի հրեային Երևան դալուն առթիվ («Երեմիա Զեկերի Քյոմյուրճյան», էջ 125):

զ. «Վիճաբանութիւն ընդդէմ Յունաց», զոր նույնինքն Երեմիա իր ձեռքով գրած և նուիրած է տիրացու Կիրակոսին:

(Զեռագիրը՝ Վենետիկի Մխիթարյան մատենադարան, թիվ 621):

է. «Համառոտ հարցմունք և պատասխանիք», զոր Երեմիա և Թադեոս երեք Համադասպան Երևանցի, բազում աշխատութեամբ համաբաժն են «ի սուրբ գրոց կարճառոտ բանիւք, ի յաստուածաբանից, ի փիլիսոփայից, ի պատմագրաց և ի կերպից ինչ աղօթից, զորս առեալ ի կատինացոց, զորս ի Յունաց և զորս ի Հայոց... ի թուին Փրկչին 1681»:

(Զեռագիրները՝ Նոր Զուղայի Ամենափրկիչ վանք, թիվ 151 և Երևանի մատենադարան, թիվ 72):

բ. «Պատասխանի Աստուածով և վասն Աստուծոյ (առ Սուրբիս վարդապետ, որ արգիւնաց զ«Իսկ որ ասենն», զոր ասացեալ են ի վերջն Հաւատամքին)»: Խոսքը ուղղված է Սուրբիս վարդապետի դեմ, որ փորձութիւնն ունեցած է արգիւնելու իբրև խոտելի՝ Հավատամքին կից բանաձևը՝ «Իսկ որ ասենն», Երեմիա 40 առարկութիւններով և ապացոյցներով ջատագով կկանգնի ընկալյալ սովորութեան:

(Զեռագիրը՝ Վիեննայի Մխիթարյան մատենադարան, թիվ 779, թ. թ. 1ա—4ա):

բ. «Պատասխանիք ընդդէմ այնոցիկ, որ բամբաստին զկեղեցիին Հայոց, յորում յիշատակին և Կղեմէս և գիրք մի Վահան հաւատոյ կոչեցեալ»:

(Զեռագիր՝ Երուսաղեմ և Վենետիկ):

ժ. Ճառեր եկեղեցական սուրբ ժողովներու վրա, զետեղված «Ստամպոլայ պատմութեան» ձեռագրին վերջը: Կհիշատակե Թորգոմյան («Ստամպոլայ պատմութիւն», Ա, էջ 185):

ժա. «Վասկ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Բրիտանի յաճախեալ Երեմիայի բանաստեղծէ ի խնդրոյ որդւոյն Գրիգորիսի ռետորի»: Բաժնված է 13 հատվածներու և գրված է ռամկախառն գրաբարով:

(Զեռագիր՝ Վիեննայի Մխիթարյան մատենադարան, թիվ 407, թ. թ. 116ա—146բ):

Երեմիա Զեկերի զանց չէ ըրած հանդես գալ թուրքերին թարգմանութիւններով ալ, ոչ միայն Նոր Կտակարանը և Հին Կտակարանն հատվածներ և «Յայսմաւորք»-ն քաղվածքներ վերածելով թուրքերին, այլև թուրք լեզվի թարգմանելով իտրեկացիին, քաղվածաբար, նույնպես և նյութեր Բագրատունյաց և Ռուբինյանց շրջաններու մասին, ինչպես նաև հայերենն թուրքերին փոխադրելով օտար հեղինակներ:

ա. «Պատմութիւն Հայոց», զոր, կգրե Չամչյան (Գ, էջ 723), «Թարգմանեաց ի խնդրոյ գրագիրացն Տաճկաց ի լեզու նոցա զպատմութիւն իտրեկացոյն քաղուածով, ընդ նմին և համառոտ տեղեկութիւն ինչ ի վերայ Բագրատունեաց և Ռուբինեանց»: Չայն կհիշե նաև Ալիշան իբրև «Հայոց պատմութիւն մի թէ՛ հայերէն և թէ՛ թուրքերէն» («Հայապատում», Ա, § 133):

բ. «Սաղմոս Դարի», թարգմանված թուրքերին 1692-ին ի Կոստանդնուպոլիս, ի խնդրոյ Տյունկյուճյան անուն բարձրաստիճան անձնավորութեան մը:

(Զեռագիր՝ Վենետիկ, թիվ 85, Վիեննա, թիվ 988, և Երևանի մատենադարան, թիվ 1644):

գ. «Քարգամնութիւն նոր Կապարանի և մասանց Հին Կապարանի»։ Կհիշե Չամչյան (Գ, էջ 723)։

դ. «Հիփեայի Ֆարիս վէ վէնա. թէրճէմէի Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանց»։ Տպագրված է Կոստանդնուպոլիս, 1871-ին, Զարդարյան եղբարց տպարանին մեջ, և կրակականա 140 էջերի։ Երեմիա այս թարգմանությունը կատարած է Հովհաննես Տերզնցյոյ ձեռքով ֆրանսերենի թարգմանված և 1587-ին Մարսել տպագրված հայերեն հրատարակության վրային, որ «Պատմութիւն Փարէզ մանկանն և վէնիայոյ դստերն Դալֆի իշխանին վէնեայոյ Բաղափին» խորագիրը կրեր (Ակիւնյան, «Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան», էջ 133—134)։

Իսկ հայատառ թուրքերեն հրատարակությունը ունի երկրորդ տիտղոս մը ևս՝ «Հիփեայի Ֆարիս վէ վէնա. պատմութիւն Ֆարիզոյ և վէնայի, շարադրեցեալ ի լատին լեզու և թարգմանեցեալ ի հայկական բարբառ յունեմէ, Հոմերական ոճիւ, և վերստին թարգմանեցեալ ի տաճկական բարբառ ոտաւոր ոճիւ, ի յերեմիայ Չէլէպոյ ի Քէօմիւրճեանց զարմէ, որ և Բանասէր իսկ յորջորջի, առ ի զուարճութիւն ընթերցողաց»։

Ե. Քարգմեն տանկերեն լեզվով. ա. «Քարոզ ի վարդավառն», բ. «Կտակ խաչելութեան»։

(Չեռագիր՝ Վիեննայի Մխիթարյան մատենադարան, թիվ 407, թ. թ. 94ա—115բ)։

գ. «Համառոտ Յայսմաւորք ի լեզու Տանկաց, գրեալ յէջմիածին ի բօլին ՌճԼԴ» (1685). բաժնված է 13 գլուխներու և կպարունակէ 175 վկայաբանություն։

(Չեռագիր՝ Երուսաղեմ, թիվ 1076, թ. թ. 5ա—139ա)։

է. «Պատմութիւն Մեծին Աղեփաւորի», հայերեն թարգմանված թուրքերենի ոտանավոր շափով։ Իսկական խորագիրն է «Քիթապ Բէֆեայի ձիճանկիւ Իսֆէնտէր Դուրլըգային. իսան էրմէնիւտէն իսան բուրֆէ բէրնումէի էսք էլնագիր Իւլմիա»։ Կհիշեն Չամչյան (Գ, էջ 723), Սոմալյան, («Quadro», էջ 160) և այլն։

(Չեռագիր՝ Երուսաղեմ, թիվ 988, թ. թ. 6ա—178ա)։

Եվ վերջապէս Երեմիային Կհիշլիին կարեւոր թվով դանձեր, ողբեր, գովքեր և տաղեր, զորս ան հորինած է զանազան առիթներով և ուրոնցմէ կմնան՝

ա. «Ողբ ասացեալ Երեմիայի ի ման մանտեսի Ամբակումի, որ էր Կ (60) ամաց, ի բօլին Ռճէ» (1658)։

բ. «Ներբողեան ասացեալ Երեմիայի առ ի քաղումն Աբրահամ Չէլէպոյ դստերն փոքր որ ի բուականն Հայոց ՌճԺ» (1661)։

գ. «Ագուլեցի խօնայ Խօսովի մանուան նառ ի սկզբանէ մինչև ի նորին վաղնան, ասացեալ ի խնդրոյ ամուսնոյ նորին»։

դ. «Գանձ ասացեալ Երեմիայի ի վերայ մօրն իւրոյ. ՌճԺ (1663) քվին Հայոց»։

ե. «Գանձ և ողբ ի վերայ հօրն (Տէր Մարտիրոսի Քէօմիւրճեան)»։

զ. «Գանձ և ողբ ի վերայ Յակոբ կաթողիկոսի. ՌճԺ» (1680)։

է. «Գանձ մանկանասկ ներեցելոց արուաց և իգաց. ՌճԺ» (1665)։

ը. «Ողբ ներեցելոց»։

թ. «Ողբ տղանասկի»։

ժ. «Տաղ տղայոց անմեղաց»։

ժա. «Այլ [ողբ] տղայոց մանուան»։

ժբ. «Տաղ ի Ս. Աստուածածինն»։

ժգ. «Տաղ ի վերայ ջրոյ»։

ժդ. «Տաղ ի վերայ ջրոյ»։

ժե. «Տաղ Սուրբ Աստուածածնի»։

ժզ. «Տաղ Սուրբ Աստուածածնի»։

ժէ. «Տաղ սիրոյ և ուրախութեան»։

ժր. «Տաղ (եւ արեւու ծագող լուսոյ անդին)»։

ժր. «Գովասանութիւն ի վերայ ջրոյ»։

ի. «Գովեստ առ Ս. Աստուածածինն»։

իա. «Տաղ ասացեալ ի Երեմիայի ի վերայ Ս. Երուսաղէմայ տանկի բարբառով»։

իբ. «Տաղ ասացեալ Երեմիայի ի վերայ Սողոմոն Իմաստնոյ»։

իգ. «Տաղ ասացեալ ի Երեմիայի վասն անցաւորութեան աշխարհիս»։

իդ. «Տաղ Յովնաննու Միւրչի»։

իե. «Տաղ ի վերայ Ս. Գերեզմանին Քրիստոսի. տանկի բարբառով»։

իզ. «Նրգ սիրոյ»։

իէ. «Նրգ զարիբի»։

իր. «Զանազան անխորագիր տաղեր»։

Այս շարքին պիտք է կցել նաև՝

իթ. «Գովասանութիւն յարմարեալ ի սուրբ տնօրինականացն Քրիստոսի», 1665-ին Երուսաղեմ կատարած այցելության առթիվ հորինած 40 տաղերն են, զորս 1677-ին լույս ընծայեց 35 էջնոց գրքուկով մը նույն տարին իր իսկ հիմնած տպարանին մեջ, զարդարելով զայն 15 պատկերներով և հետևյալ խորագրով. «Տնդեաց տնօրինականաց Տնառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ ի Սուրբ Երուսաղէմ և ընդ գաւառն»։

Դրական ժառանգություն մը ահա, որ եզական կմնա հայ մատենագրության մեջ։ Հավասար չափով պատմական կամ գրական արժեք չեն ներկայացնելու անշուշտ գրչի բոլոր այս արտագրությունները։ Ինչ որ բացառիկ է Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի մեջ, իր հիմնական մտահոգությունն է՝ կրքերն վերմնալ և անաշառ ըլլալ իր օրերու դեպքերն ու դեմքերը դատելու ժամանակ, իր զգացածն

ու մտածածը անկեղծությամբ հանձնել թուղթին, ոչ տարվիլ կողմնակի նկատումներն և ոչ ալ բարեկամություններն ազդվիլ, և չխնայել ոչ ոքի, ով ալ ըլլա ան, ինչ աստիճան ալ ան ունենա: Այսպէս եղավ ան իր կյանքին ու գործունեության մեջ և այսպէս մնաց իր երկերուն մեջ ևս:

Ծիշտ է, Երեմիա Չելեբի տուրք տվավ հին ավանդությանց, իր երկերուն հորինման ժամանակ: Հոնտորական ոճը չկրցավ թոթափել իր գրությանց մեջ և տաղաչափյալ տվավ նույնիսկ իր պատմական էջերն ումանք: Ծիշտ է նաև որ ան ավյուն սպառեց հումպետս բառախաղերու վրա՝ թվականներ արձանագրելու համար, և իր տաղերն շատերը բռնազրոսիկ ձիգ մը կմատենն: Ինչպէս իր ոճին, նույնպէս իր լեզվին մեջ ան իր շրջանի մտայնության իր տուրքը տվավ: Հաճախ աղճատ է իր գրաբարը և իր երկերն ումանք հորինած է Պոյսս բարբառով, ուր թրքաբանություններն իսկ կհորդին. բայց և ունի մաքուր գրաբարով շարադրված բազմաթիվ էջեր:

Այս բոլորով միասին, Երեմիա Չելեբի Քյոմյուրճյան կհանդիսանա բացառիկ դեմք մը իր դարուն, ու շատ մը դարերու համար, որքան իր հանրային գործունեության, նույնքան իր գրական վաստակին մեջ: Եվ արդար էր, որ մոռացության գրկեն դուրս հանվեր ինչ որ ան ըրավ իր ժողովուրդին համար և ինչ որ թողուց իր ետին:

Ո՛ւր է սակայն հոգածու ձեռքը, որ ի մի համախմբեր Երեմիա Չելեբիի ցիրուցան աշխատանքները և լույս ընծայեր զանոնք գիտական հրատարակության մը մեջ: Ազով մարդ մը պիտի կանգնէր հայ մատենագրության պատմության մեջ իր վիթխարի հասակով և շատ բան ավելի լրիվ պիտի գիտնայինք անոր ապրած շրջանն:

Եվ այն ժամանակ պատմությունը երկյուղածորեն բայց և հպարտությամբ պիտի արձանագրեր իր պատմանդանին վրա՝ Մարդ մը որ իր դարը փրկած է:

(Շարունակելի)